ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Проблемы экономического выравнивания в сельском хозяйстве», издательство АН Арм. ССР, Ереван, 1978, 228 с.

«Տնտեսական համահարթման պրոբլեմները գյուղատնտեսության մեջ», *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, 228 էջ։*

Զարգացած սոցիալիզմի պայմաններում քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների հաղթահարման պրոբլեմի լուծման կարևոր կողմերից է գյուղատնտեսության մեջ աշխատողների կյանքի պայմանների տարբերությունների համահարթումը, նրանց աշխատանքի պայմանների և կենսամակարդակի մերձեցումը։ Այդ հարցին է նվիրված գրախոսվող ժողովածուն, որը լույս է ընծայել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտը՝ տնտեսագիտության դոկտոր Ն. Մանասերյանի ընդհանուր խմբագրությամբ։ Նրանում տեղ են գտել հինգ ծավալուն հոդվածներ, որոնցից յուրաքանչյուրում վերլուծվում է քննվող պրոբլեմի այս կամ այն կողմը։

Ժողովածուի առաջին հոդվածը նվիրված է գյուղատնտեսության մեջ եկամտաբերության, կուտակման և սպառման համահարթման հարցերին։ Հոդվածի հեղինակ Ն. Մանասերյանն իր հարդադրումները կատարելիս ելնում է այն բանից, որ տարբեր գյուղատնտեսական գոտիներում ու շրջաններում աշխատավորական կոլեկտիվների գործունեության սոցիալ-տնտեսական պայմանների համահարթումը սոցիալիստական էկոնոմիկայի օբյեկտիվ օրինաչափություններից է։ Այդ պրոցեսի վճռական պայմանը նա իրավացիորեն համարում է արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը, որոնց շնորհիվ արագորեն ստեղծվում է նաև գյուղատնտեսության ժամանակակից նյութատեխնիկական բազա։ Դրա հետ միասին հոդվածագիրն ընդգծում է, որ բարձր զարգացած արդյունաբերությունն ամբողջությամբ վերցրած համահարթման պրոբլեմի լուծման առավել կարևոր պայման է։

Հոդվածում հետաքրքիր ձևով է լուսաբանված կոլտնտեսությունների եկամուտների բաշխման և օգտագործման հարցը։ Համեմատելով Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքի վարձատրության աճի տեմպերը, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ հանրապետության մի շարք շրջաններում աշխատանքի արտադրողականության համեմատությամբ աշխատանքի վարձատրության առաջանցիկ աճն օրինաչափ երևույթ է։ Դա բնութագրում է տարբեր կոլտնտեսություններում աշխատանքի վարձատրության աստիճանական համահարթման պրոցեսը։

Վերլուծելով հանրապետության կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերի և աշխատանքի վարձատրության վերաբերյալ բազմաթիվ նյութեր, Ն. Մանասերյանը եզրակացնում է, որ Հայաստանի կոլտնտեսություններում համախառն եկամտի մեջ աշխատանքի վարձատրության ֆոնդի բարձր տեսակարար կշիռը պայմանավորված է կոլտնտեսականների օժանդակ տնտեսությունների չափերով, որոնք մյուս հանրապետությունների համեմատությամբ զգալիորեն փոքր են։ Մյուս կողմից, այդ հարցը քննելիս հեղինակը ելնում է ամբողջ երկրի մասշտաբով ժողովրդատնտեսական ցուցանիշներից։

Հոդվածում հատկապես մեծ տեղ է տրված հողային ռենտայի պրոբլեմին։ Հեղինակն ինքնատիպ մեթոդով որոշում է ոչ միայն դիֆերենցիալ հողային ռենտայի, այլև դիֆերենցիալ վնասների չափերը։ Այնուհետև Ն. Մանասերյանը բացահայտում է մեր հանրապետության կոլտնտեսությունների գոտիական տնտեսական շերտավորման միտումները և հանգամանորեն լուսաբանում այն հարցը, թե ինչպիսին է համահարթման պրոբլեմի և դիֆերենցիալ հողային ռենտայի կապը և որն է այդ պրոբլեմի առանձնահատկությունը։ Հոդվածագրի հիմնական եզրակացությունը հետևյալն է. համահարթման պրոբլեմի լուծման համար անհրաժեշտ է ոչ թե դիմել գյուղատնտեսական մթերքների մթերման գների հետագա շերտավորմանը, այլ դրանք ավելի ու ավելի համապատասխանեցնել գյուղատնտեսական արտադրանքի համար հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքային ներդրումներին։ Հենց որում պետք է պահպանվի գյուղատնտեսական մթերքների միասնական գների հանրապետությունում գործող կարգը։

Հայտնի է, որ գյուղատնտեսական մթերքների մթերումների միասնական գները տարբեր գոտիներում նրանց ծախսերի տարբերության հետևանքով ստեղծում են վերարտադրության ոչ միատեսակ պայմաններ։ Այդ դեպքում ինչպե՞ս պետք է լուծվի համահարթման պրոբլեմը։ Ն. Մանասերյանն իրավացիորեն այդ հարցի լուծման ճիշտ ուղին համարում է միատեսակ արդյունքի միասնական գնի սահմանումը՝ արտադրության վատագույն պայմաններում կատարված ծախսերին համապատասխան։ Այդպիսի գները վատագույն պայմաններում գործող գյուղատնտեսական ձեռնարկություններին կապահովեն նորմալ եկամուտներով, իսկ միջին և լավ պայմաններում գտնվող կոլտնտեսություններն ու սովխոզները, դրանից բացի, կստանան նաև ռենտային եկամուտներ, որոնք պետությունը կարող է գանձել ֆինանսահարկային համակարգի միջոցով։ Դա ավելի կպարզեցնի պետության և գյուղատնտեսական ձեռնարկությունների տնտեսական հարաբերությունները։

Գրախոսվող ժողովածուի երկրորդ հոդվածը նվիրված է գյուղատնտեսական մթերքների սպառման ռեգիոնալ տարբերություններին և դրանց համահարթմանը։ Հոդվածի հեղինակ տնտեսագիտության դոկտոր Հ. Կարճիկյանը տեսական և մեթոդական հարցերը հմտորեն զուգակցել է մեր երկրում սննդամթերքի սպառման ռեգիոնալ տարբերությունների պատճառների վերլուծությանը և այդ հիման վրա կատարել գիտական լուրջ ընդհանրացումներ։

Հեղինակը տեսական պլանով քննում է արտադրության զարգացման և սպառման աճի օրինաչափությունները, դրանց միջև գոյություն ունեցող հակասությունները, պահանջմունքների և վճարունակ պահանջարկի փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը։ Այդ կապակցությամբ հոդվածում լուսաբանվում է նաև բնակչության թվաքանակի աճի և պահանջմունքների աճի կապը։ Այնուհետև հոդվածի հեղինակն ուսումնասիրում է հիմնական սննդամթերքների արտադրության ռեգիոնալ տարբերությունները, հանգամանորեն վերլուծում մեր երկրում սննդամթերքի սպառման կառուցվածքը, բացահայտում այդ կառուցվածքում դրական փոփոխությունների պատճառները ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ միութենական հանրապետությունների և առանձին տնտեսական շրջանների մասշտաբով։

Հոդվածում քննվում է նաև սպառման համահարթման պրոբլեմը՝ ըստ երկրի ռեգիոնների։ Ընդ որում, նշվում է, որ չնայած հիմնականում բնական պայմանների, ինչպես նաև դեմոգրաֆիական և սոցիալ-տնտեսական բնույթի գործոնների հետ կապված մի շարք առանձնահատկություններին, առաջիկայում ևս կշարունակեն գոյություն ունենալ տարբեր շրջանների տնտեսական զարգացման, այդ թվում սննդամթերքի սպառման էական տարբերություններ, որոնց հաղթահարումը տեղի կունենա աստիճանաբար։ Հեղինակի բերած բոլոր փաստարկները համոզիչ են, իսկ եզրակացությունները՝ միանգամայն ընդունելի։

Հողի տնտեսական գնահատման և դրա համահարթման պրոբլեմը ներկայումս ձեռք է բերել առանձնահատուկ նշանակություն։ Դա պայմանավորված է թերևս այն բանով, որ վերարտադրության պայմանների համահարթման տնտեսական մեխանիզմի կատարելագործման, տարբեր բնական գոտիներում կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատանքի եկամտաբերության բարձրացման առավել հավասար պայմանների ստեղծման հիմքը հողի տնտեսական գնահատումն է։ Հենց այդ հարցին է նվիրված ժողովածուի մյուս հոդվածը, որի հեղինակն է տնտեսագիտության թեկնածու Լ. Ադամյանը։ Սրանում հեղինակը նախ ցույց է տալիս հողի տնտեսական գնահատման հիմնական ուղղությունները։ Այնուհետև նա վերլուծում է հողի տնտեսական գնահատման մեթոդիկան, լուսաբանում մեր հանրապետությունում հողագնահատման աշխատանքների պրակտիկան, ելնելով հողի գնահատումից, քննում գյուղատնտեսական մթերքների մթերումների պլանավորման հարցը և որոշում դիֆերենցիալ եկամուտների սահմանման ձևերը։

Հոդվածում առաջ քաշված առավել հետաքրքրական պրոբլեմներից մեկը տարբեր պայմաններում գտնվող գյուղատնտեսական ձեռնարկությունների վերարտադրության հնարավորությունների համահարթման գործում հողի տնտեսական գնահատման արդյունքների օգտագործման հարցն է։ Այդ առիթով հեղինակն առաջարկում է մեթոդական մի շարք ուշագրավ լուծումներ, որոնք արժանի են ոչ միայն տնտեսագետ-գիտնականների, այլև գյուղատնտեսության ղեկավար աշխատողների ու մասնագետների ամենալայն ուշադրությանը։

Ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմությանը բնորոշ է առարկայացած աշխատանքի՝ արտադրության միջոցների աճող դերը։ Գրախոսվող ժողովածուի հաջորդ հոդվածը, որի հեղինակն է տնտեսագիտության թեկնածու Մ. Երոյանը, նվիրված է հենց այդ հարցին։ Մեծ քանակությամբ վիճակագրական նյութերի և սեփական ուսումնասիրությունների հիման

վրա հեղինակը բացահայտում է ՍՍՀՄ-ում և Հայկական ՍՍՀ-ում կենդանի և առարկայացած աշխատանքի հարաբերակցությունը։ Այնուհետև նա քննում է երկրում և մեր հանրապետությունում գյուղատնտեսության ֆոնդազինվածության և էներգազինվածության դինամիկան, նա արտադրության տարբեր ճյուղերի, ինչպես նաև դանազան ձեռնարկությունների զարգացման պայմանների տնտեսական համահարթման նյութական հիմքն իրավացիորեն համարում է նյութատեխնիկական միջոցներով ապահովվածության տեսակետից հավասար պայմանների ստեղծումը։ Հեղինակը յայնորեն քննում է նաև ֆոնդազինվածության և էներգազինվածության բնագավառում արդյունաբերության և գյուղատնտեսության, կոլտնտեսությունների և սովխոզների մերձեցման հարցերը, հստակորեն որոշում այդ մերձեցման ուղիներն ու փուլերը։

Ժողովածուի վերջին հոդվածում ամենից առաջ տրվում է գյուղատնտեսության աշխատողների ժամանակակից մասնագիտական կառուցվածքի մանրամասն բնութագիրը։ Այստեղ գյուղատնտեսության կադրերի մասնագիտական ձևավորման դինամիկան քննվում է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման գործոնների, գիտատեխնիկական առաջադիմության արագացման և աշխատանքի մասնագիտական բաժանման զարգացման հետ սերտորեն առնչված։ Հոդվածի հեղինակը՝ տնտեսագիտության թեկնածու Ռ. Իսախանովը, գյուղատնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմության կարևորագույն ուղղություններից մեկը համարում է մտավոր աշխատանքով զբաղվողների թվի ավելացումը և ձեռքի աշխատանք կատարողների թվի կրճատումը։ Հոդվածագիրը հատուկ ուշադրություն է նվիրել աշխատանքի բնույթի փոփոխության հարցերին։ Նա համոզիչ կերպով ցույց է տալիս, որ գիտատեխնիկական առաջադիմությունն ամենուրեք, այդ թվում գյուղատնտեսության մեջ, նորանոր պահանջներ է առաջադրում աշխատողների որակավորման բարձրացման նկատմամբ։ Այդ պրոցեսի առավել բնորոշ կողմերից մեկը հեղինակը համարում է գյուղատնտեսության մեջ որակյալ և բարձր որակյալ կադրերի ավելացումը։ Գյուղատնտեսության աշխատողների մասնագիտական կառուցվածքի փոփոխությունների պրոցեսի ուսումնասիրության հետ միասին Ռ. Իսախանովը քննում է նաև նրանց պրոֆեսիոնալական կրթության բարելավման հարցերը և առաջարկում է մի շարք ընդունելի միջոցառումներ։

Մեր կարծիքով, ժողովածուի մեջ տեղ են գտել որոշ թերություններ։ Այսպես, օրինակ, այնտեղ նշված է, որ «ներկա փուլում և հեռանկարում համահարթման հարցադրումը և նրա լուծման կոնկրետ ուղիների հիմնավորումը սովխոզային սեկտորի համար ձեռք է բերում ոչ պակաս կարևոր նշանակություն, քան կոլտնտեսայինի համարս (էջ 28)։ Մեզ թվում է, որ այդ դրույթը վիճելի է։ Բանն այն է, որ վերարտադրության բոլոր ասպեկտներում կոլտնտեսությունների և սովխոզների միջև կան և առաջիկայում նույնպես կլինեն զգալի տարբերություններ։ Հայտնի է, նաև, որ տնտեսական համահարթման մեխանիզմի համակարգում կարևոր նշանակություն ունի ֆինանսական լծակների կատարելագործումը և նպատակահարմար օգտագործումը։ Ամենից առաջ նկատի ունենք մթերման գները, եկամտահարկը և այլն, որոնց հետագա կատարելագործման հարցում մեծ դեր է պատկանում հողի տնտեսական գնահատմանը։ Դժբախտաբար, այդ հարցերի վերաբերյալ ժողովածուի մեջ մեթոդական մշակումներ չկան։

Ամփոփելով նշենք, որ «Տնտեսական համահարթման պրոբլեմները գյուղատնտեսության մեջ» գիտական հոդվածների ժողովածուն արժեքավոր ուսումնասիրություն է։ Նրանում տեղ գտած բոլոր հոդվածները միավորված են և՛ հետազոտության առարկայով, և՛ հետազոտության նպատակով։ Հեղինակներն առաջ են քաշել խիստ ուշագրավ հարցեր և դրանք լուծել տեսական բարձր մակարդակով։ Տարակույս չկա, որ ժողովածուն օգտակար կլինի տնտեսագետների, մանավանդ գյուղատնտեսության մեջ վերարտադրության պրոբլեմներով զբաղվողների լայն շրջանների համար։

ՄԻՀՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու